ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ

ՀՐԱՄԱՆ № 31

«23» 04 2020 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 44 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Ալբերտի Նիկողոսյանին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազի պաշտոնից ազատելու և Աշոտ Միշայի Ժամկոչյանին նույն պաշտոնում նշանակելու մասին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար 23.04.2020թ. N 106-Ա և 107-Ա հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի՝ «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի, նրա տեղակալների և գլխավոր դատախազության ավագ դատախազների միջև աշխատանքի բաժանում կատարելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2018 թվականի ապրիլի 10-ի N 28 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 44 հրամանի 1-ին կետի 7-րդ ենթակետում «**Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Արմեն Նիկողոսյանը**» բառերը փոխարինել «**Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազ Աշոտ Ժամկոչյանը**» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ

դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ